

19 Օգոստոս

Աւստրիական կառավարութիւնն յայտարարեց, որ եթէ Օսմանեան կառավարութիւնն Յունաստանի հետ պատերազմել սկսի՝ ինքն ալ պիտի բարեհաճի Նովի - Պագարը գրաւելու:

–Ինչո՞ւ:

–Իւր սահմանները պահպանելու համար: Հարկաւ Անգղիան ալ պիտի ուզէ ուրիշ կողմի մը գրաւել՝ Հնդկաստանի ճամբան ապահովելու համար:

20 Օգոստոս

Անգղիոյ դեսպանն այսօր Գանտիլլի գնաց եւ Ս. Պատրիարք հօր հետ բանակցեցաւ հայկական խնդրոյ վրայ:

**

Ամենայն ինչ կատարեալ է...:

Նաւային ցոյցը տեղի պիտի ունենայ:

Անգղիական, գաղղիական եւ իտալական զրահաւորները Փալէրմոյ նաւահանգիստին մէջ համախմբուած են. ռուսական զրահաւորները Ռակուզա են եւ գերմանական զրահաւոր մ'ալ Մալթայէն ճամբայ ելած է:

Անգղիական, գաղղիական, իտալական, ռուսական եւ գերմանական զրահաւորնէ՛ր...

Կեցցէ՛ հինգլեզուեան նաւատորմիդը:

Աղօթենք, որ այս նաւատորմիդին մէջ լեզուները չխառնուին, որպէս զի կարողանան աշտարակին կիսատ մնացած շինութիւնն աւարտել:

Ես ալ Թովմաս առաքեալի պէս թեպէտ եւ Անգղիոյ կառավարութեան կողը մատս չեմ խօթած, այսու ամենայնիւ հիմա կհաւատամ, որ տէրութիւններն Ալպանական Միութիւն կամ երրորդութիւն մտիկ ընելու ժամանակ չունին եւ որոշած են անպատճառ կարգադրել Յունաստանի, Գարատաղի եւ Հայաստանի խնդիրները:

Տէր Աստուած անսասան պահէ տէրութիւններուն համաձայնութիւնը, համաձայնութիւն՝ որուն նմանը քերականութիւններու մէջ իսկ խիստ քիչ կը գտնուի: